30. ԴԱՐԲՆԻ ԱԽՉԻԿ

Կէղնի, չէղնի ժըմընկով դարբինըմ կէղնի ու ուրին կնիկըմ ու ախչիկըմ։ Կնիկ կմեռնի, ախչիկ կմնա որբ։ Ախչիկն է, կբըռնե զհոր յախեն, կասե.—Աբո՛, մըր տուն շահող ու շարաշվողըմ չկա, կէղնի էկո կարգվի, կնիկըմ ըի, զմըր տուն վերցու դնե։

Հեր լէ կասե ախչկան.—Արի զքըզի կարգիմ, բերինք տնփեսեմ՝, թըղ էրթա զմըր տուն շահե շարաշըվե։

Էդ դարբինն է, զգլուխ մտուցեր է գինու կարսի մեշ, գիշեր ու ցերեկ կխմե, հա՛ կխմե, խմելուց իսկի աչք չբանա։ Դարբին լուսուն կէլնի կէրթա դուքան, հ՝իրկուն կդառնա կիգա։ Ախչիկ մինակ կմնա տուն, կէփե ուրեն հաց, կուտե ու կնստի։

Էդոնց լէ պզտիկ բոճիմ՝ կեր, ախչիկ օր ղուր հաց կէփեր, կուտեր, կխըլըսեր, կգրկեր զէդ շուն ու կնստեր, հար հ՝իրկուն հերն գառեր հ՝իգեր տուն։ Օր կիգեր, ըստհաղ հեր կդներ չոքերու վրեն ու կնստեր, հար հ՝ելնեն, պառկեն, քնեն։

Օրըմ հ՝իրկուն է, նստուկ ին, հերն ու ախչիկ կխոսեն, տեսան, օր տըղեմ՝ զարկ զդուռ, մտավ ներս։

— Բարի հ՝իրկուն, ուստա՛։

— Աստծու բարին, կտրի՛ճ։ —Խե՞ր է,—վերցուց ասեց դարբին,—էդա հ՝իրկըվնոցով ու դու էդա տե՞խ։

Ասեց.—Խեր է։ Ճամփորդ ենք, էկա կընցնենք էրթենք, ծուխ

տեսա կէլներ էդա տեխեն, մտա ներս։ Ասի՝ ուտիմ բրդուճըմ հաց, թողիմ էրթամ։

— Ախչի,—ասեց դարբին,—հ'էլի լողմեմ՝ հաց ըի էդա կտրիճին, թըղ ուտե։

Ախչիկն հ'էլավ առավ հաց ու էկավ, տղեն կերավ, հ'էլավ գնաց։

Բըլե տղեն հաց օր կուտեր, աչքըմ ճըտեց ախչկան, աչքըմ լէ ախչիկ ճըտեց տղին։

Տղեն հաց կերավ ու հ'էլավ գնաց, գնաց ուր տուն պառկավ քնավ։

Էրղի մեջ տեսավ օր ուր տեսած դարբնի ախչիկ զկապ էձգեր է վիղ կխեղդվի, թալեց ինք ղձեռք կապ, կտրեց ու խրատավ հ'իմցավ։

Ասեց. «Էղնի չէղնի ես պիտի էրթամ ղդարբնի ախչիկ հ'ուզիմ ընծիկ»։

Հ'էլավ լուսուն ու դեմ քշեց դարբնի տուն, տեսավ օր ախչիկ մինակ է տուն, դարբին տուն չէր, հ'էլավ վի, նստավ։

Նստավ, ինք ու ախչիկ քիչըմ խոսացին հ'իբարու հետ։

Ախչիկն էրեց.—Կտրի՛ճ, խե՞ր է, դու հըմլա թավակալի էկար, հ'էլար հ'ոդա։

Տղեն ասեց.—Քու մոտ մալում է։

Օր տղեն ասեց՝ քու մոտ մալում է, տխչիկը հասկցավ, հ'էլավ զուր մատնեկ ու տղին փոխեց։

Ասեց.—Դու հ'էլի էդա դախ գնա, հ'իրկուն իմ հեր կիգա, էկո հ'ուզե։

Տղեն ասեց.—Վախենամ հ'իգամ հ'ուզիմ, քու հեր չիտա։

Ախչիկն ասեց.—Իմ հեր իմ դավին խառըշմիշ չէղնի, ես օր առնիմ, իմ հեր բան չասե։

Տղեն ասեց.—Հըմալ է՝ էդա գախ կէրթամ, հ'իրկուն նոր կիգամ։

Տղեն հ'էլավ թորկեց էկավ ուր տուն։ Հ'իրկուն էղավ, դարբին օր դարձավ էկավ տուն, տեսավ ախչկա մադեն վրեն չէ։

Ասեց.—Ախչի, զմադեդ հ'օրի՞ն իս էրի։ Ի՞նչ է էլի քզիկ։

Ախչիկն ասեց.—Բան չէղեր է։

— Ախչի լաո,—քու մաղեն աղեկ չէ, հալբաթ բանըմ էղեր է, հ'իսնե հ'օրի՞ կպահիս։

Ախչիկն ասեց.—Աբո՛, քինե պահիմ, աստծուց ի՞նչ պահիմ, հ՚էսօր էդա տեխ, տղեմ՚ էկավ, ես շատ հավնա էդ տղին, կուզիմ առնիմ, էդոր հ՚ապով իմ զմադեն էրի։

— Է լաո՛,—ասեց,—քու սիրտ բռներ է, ես ի՞նչ պիտի ասիմ, վիրն օր կուզիս, էնդոր կիտամ զքզի։ Դու էլի զիմ փառչ գինին րի խմիմ, աստված օղորմած է։

Ախչիկն հ՚էլավ առավ զփառչ գինին, բերեց դրեց հոր հ՚առեշ ու նստավ հ՚առեշ, մեկ-մեկ կըլներ ու կիտեր հոր, կխմեր ու ինք թամաշա կէներ։ Քիչըմ մանցին, տեսավ օր տղեն զարկեց զդուռ, մտավ ներս։ Ներս մտնելու պես, էկավ բռնեց զախչկա հոր ձեռք, պագեց։ Օր պագեց, հերն ասեց.—Ախչի էդա՞ տղեն է։

Ախչիկն ասեց.—Հա՛։

Օր ասեց՝ հա, դուք լէ բռնեք զիրարու ձեռք թոթվեք։

Ախչիկն ու տղեն զդաստուր օր առան, փաթվան հ՚իբար, պաղեցին զիրար. օր պագեցին խըլըսան, դարբին դարձավ ախչկան ասեց.—Ախչի՛, դու քու սրտով զէդա տղեն կառնի՞ս։

Ախչիկն ասեց.—Հա՛։

Դարձավ ըստհաղ վըր տղին, ասեց.—Տղա՛, դու քու սրտով զիմ ախչիկ կառնի՞ս։

Տղեն ասեց.—Հա՛։

Օր էրկուսի թախրերն առավ բերնե ուրանց, ասեց.—Հըմա լէ մեկ-մեկ նշան տվեք հ՚իրարու, կուզիք պսակվեք, կուզիք մ՚պսակվեք լէ։

Ախչիկն ասեց.—Մենք զմըր նշան տվեր ինք. զմատնըկներ շուտ ինք փոխի։

Ուրախցան հ՚իրարու, կերան, խմեցին, քնելու վախտ օր էղավ, թալեցին մեկ տեխ տղին, մեկ՝ դարբնին, մեկ լէ ախչիկ ուրին, պառկան քնան. լուսուն հէլավ գնաց ուր գործուն։

Ինչ ասիմ հրմալ էղավ, օր տղեն էղավ տնեն, հ՚իրկուն սըլընկ, լուսուն պըլընկ, ուր տան պես կէրթեր ու կիգեր։ Դարբին էլ ուր տնեն խաբար չուներ, մենակ զուր գինու փառչն էր բռնի ու կանի. հ՚իրկուն կիգեր, կղներ զուր փառչ հ՚առեջ, կխմեր, պառկեր քներ, լուսուն կէլներ կէրթեր ուր գործուն։

Հ՚ընցավ մասլեն մեկ հինգ վեց ամիս. էդ տղի էլն ու ուրիշ էլմ՚ հ՚իրարու հետ կռիվ էրին վըր ախչկա մը փախցնելուն։ Տղի վրեն դրին, ասին՝ «Դու լէ պետք է հ՚իգաս մըր հետ, էրթանք կռիվ»։

Տղեն ասեց.—Ես իմա՞լ զիմ նշանլուն թողիմ էրթամ. օրըմ օր չտեսնամ, գինամ աշխարհ վրես մութ է։

Հ'էլավ էկավ ախչկա խեչ, բացեց զդուռ, հ'էլավ վերին գին։ Ախչիկ տեսավ օր տղեն էկավ, փաթվավ տղի վիզ, տարավ նըստըցուց, տեսավ օր տղի մատեն վրեն չէ։

Ասեց.—Տղա՛, ի՞նչ է էղի քզիկ, հ'էսօր քու մատեն վրեդ չէ։

Տղեն ասեց.—Ի՞նչ պիտի էղնի, իմ էլն ու ֆըլան էլ դու դինաս օր ֆըլան ախչկա փախցնելու վրեն հ'էլած ին վիրարու, դրած ին վըր ընծիկ, կասին՝ «Դու լէ էկո էրթանք կռիվ». շիվարեր իմ, մանցի։

Էդ օր ասեց, ախչիկ լէ զուր մատեն էրեց։ Տղեն տեսավ օր ախչիկ լէ զուր մատեն էրեց։

Ասեց.—Ջանը՛մ, խասավաթ մ'էնի, աստված օր կամեցեր է, էդա տեխ լէ նստուկ էղնիմ, կսպանվիմ, օր չկամեցեր է, կռվի մեջ չէ, ջանամ լէ էրթամ, չըմ սպանվի։ Մեկ լէ սաղ սալամաթ կդառնամ հ'իգամ, առնիմ զքզիկ։

Տղեն հ'էլավ, բարեմնաց կնկաց, պագեցին զիրարու հ'էրես ու հ'ընկավ ճամբախ։ Գնաց, շատ գնաց, քիչ գնաց, գնաց հասավ ուր էլին, գնաց կռիվ։ Տղեն գնաց կռիվ, հինգ, տաս օր մանցինք, օրըմ հ'իրկուն դարբնի ախչիկ նստուկ էր արնե արցունք կթափեր, դարբին էկավ տուն։ Էկավ տուն, տեսավ օր ախչիկ նստեր է կիլա։

Ասեց.—Ախչի՛, խեր էղնի, հ'ո՞րի կիլաս։

Ախչիկն ասեց.—Իմ էրիկ գացեր է ուր էլի հետ կռիվ, վախենամ սպանվի, էնդոր հ'ապով կիլամ։

Դարբինն ասեց.—Լա՛ռ, պարապ տեխ հ'ո՞րի կնեղմըտիս. աստված կամեցեր է, տան մեջ լէ նստուկ էղնիս՝ կսպանվիս։ Աստված օր չկամեցեր է, կրակի մեջ լէ էղնիս, կազատի կիգա։

Դարբին մեկ լէ բերեց զուր խըդեն ու գինու փառչ, խմեց, էղավ զուռնա ու տեխ ըը տեխ թըլմըշավ, հ'ընկավ։ Ախչիկ լէ զուր ձեռք դրեց հ'երսին, մտածեց, մտածեց ու հ'ընկավ քնավ։ Էն հ'ընկավ մեկ դին, էն լէ՝ մեկ դին։ Մանցին տասն օր, օրըմ ախչիկ նստուկ էր փանջարեն, տեսավ լերթ թըռման մարդըմ էնդիեն կիգա, արուն կչըռչըռա թևերեն ու ճըռները շըրա-շըրա։ Էկավ, էկավ ախչկա տան դուռ կանավ։

Ասեց.—Ախչի՛, քիչըմ շուր տուր խմիմ։

Ախչիկն ասեց.—Տղա՛, քզիկ ի՞նչ է էղի։

Տղեն ասեց.—Լա՛ռ, ի՞նչ կհարցուս, փորձանքիմ հ՚ըռաստ էկա, իմ ումրի մեջ հըմալ բան չընք տեսի։

Էրեց ախչիկն.—Ի՞նչ փորձանք էր։

Տղեն ասեց.—Գացի իմ քեռու ախչիկ ֆըլան գեղն էր, կբերենք։

Էկա տեսա օր էրկու էլ հ՚իրարու կզարկին ախչկամ վրեն։

Ասի.—Զզիկ ամոթ չէ՞, ախչկա մը հ՚ապով զիրարու միս կուտիք։

Խոսքերըս բերնիս մեջ էր, մեկ լէ տեսնամ օր էնդիեն դալուխանլի տղեմ՚ թուրըմ թալեց զիմ ճըռներ ու զիմ թևեր էրեց շըրաշըրա, դրեց գետին։

Ասեց.—Դու ճամբորդ մ՚իս քու հալու հետ, ի՞նչ լախա ունիս էդա հըմլա բանի հետ, թող գնա քու ճամբու հետ։

— Է, ղու չհասկցար, ո՞րն է սպանվի, որն է մանցի։

Ասեց.—Վալայի էդա խրդար հասկցա, կասեն, դարբնի փեսեն է սպանվի, շատ կափսոսեն։

— Իմա՛լ, իմա՛լ,—ասեց ախչիկ։

— Դարբնի փեսեն, ասին, դարբնի փեսեն էլ որն է չըմ գինա, չէ՞ղնի քզիկ բան գիկա։

Ախչիկն ասեց.—Չէ՛, բան չիդա ընծիկ։

Տղեն օր խմեց զուր շուր, թորկեց գնաց, ախչիկն տըփվավ ու հ՚ընկավ վըր քիթուբերնին։

Հ՚իրկուն էղավ, դարբին փըրթավ էկավ, տեսավ օր ախչիկ հ՚ընկուկ է քիթուբերնի վրեն, կտըփվի ու կիլա։

Ասեց.—Ախչի՛, քզիկ ի՞նչ է էղի։

Ասեց.—Հ՚էսօր տղեմ՚ էկավ էդա տեխ, ասեց. «Դարբնի փեսեն է սպանվի». էնտոր հ՚ապով կիլամ։

Դարբինն ասեց.—Սպանվեր է, սպանվեր է, իմա՞լ էնինք, աստված էնդոր ճակտի գիր հըմալ էր գրի։

Էրեց չէրեց, ախչիկ տեխեն չէլավ։ Օր ախչիկ տեխեն չէլավ, ինատ էրեց, հ՚էլավ, բերեց զուր գինու փառչ դրեց հ՚առեջ ու ռազեց խմել։ Խմեց, զփառչ էրեց կես, տեխ բը տեխ հ՚ընկավ քնավ։ Հերն ուր տեխ քնավ, ախչիկ լէ մնաց ուր տեխ հ՚ընկուկ քիթ ու բերնի վրեն։

Գեժդանգեժ ախչիկն հ՚եշրցավ, զգլուխ թեքեց, տեսավ օր հեր բերեր է զգինու փառչ դրի հ՚առեջ, զկես խմեր է ու օղմկի, զձեռք դրի վըր հ՚էրսին, պառկի քնի։ Հ՚էլավ ախչիկն, ասեց. «Իմ նշան-

լուի հ՝ետևեն ես էլ ի՞նչ կէնիմ ումր ու արև, պիտի հ՝էլնիմ էրթամ էդա զընարի գլխեն ընկնեմ մեռնեմ։ Էդոնց տան կշտի հետ չէ ձորըմ կեր, կեր քառսուն մզրըխի բոյ, հ՝առշևեն լէ ջուր կընցներ. հ՝էլավ, բերեց թուղթըմ լէ գրեց ուր հոր, թե. «Քանի օր իմ նշանլուն սպանվեր է, ես լէ պիտի էրթամ թալիմ զիս գետ, խեղդվիմ»։ Բերեց զէդ թուղթ էձդեց հոր փառչի կանթի մեշ ու պագեց շան հ՝երսըներ, բարեմնաց էղավ շան մոտեն ու գնաց։

Աֆանդը՛մ, ղու մ՝ ասի օր էդ մարդ դուշմընութեն է էրի, տղեն սաղ սալամաթ դարձեր է էկի ուր տուն։

Տղեն հ՝իդալու պես, էլ ուր տուն չկանի, վազման կիգա ախչկա տուն։

Կասե. «Էրթամ աչքըմ իտամ, իգամ, տեսնամ իմ նշանլուն իմա՞լ է, իմա՞լ չէ ու իգամ»։ Տղեն էկավ մտավ տուն, գուռ բացեց օր ախչիկ ներս չէ։ Էնդին կիշքե՝ ախչիկ չկա, էնդին կիշքե՝ ախչիկ չկա, տեսավ, օր ախչկա հեր մինակ սարխոշ օղմըկեր է պատրնվեր ու գինու փառչ լէ հ՝առեջ, քնուկ։ Զխելք թրոցուց ու ռազեց դիվանի էրթալ տան լենք ու հ՝էրկենք, հ՝իգալ։ Մեկ լէ օր կէրթեր կիգեր, տեսավ փառչի կանթ թուղթըմ կա էձգուկ։

Վերցուց կարդաց, տեսավ օր ախչկա գիր, գրեր է պապուն, թե քանի օր իմ նշանլուն սպանվեր է, ես էլ ումր ու արև ի՞նչ կէնիմ, իմ նշանլվի հ՝ետև կէրթամ, զիս թալիմ սարու գլխեն, յամ գետ, մեռնիմ էրթամ։

Հ՝իմցուց զհեր, ասեց.—Հէ՛լի տնավեր, հար հ՝ե՞ր խրռաս։

Հերն հ՝էլավ, ասեց.—Փա՞ռք աստծու, դու սաղ սալամաթ էկեր իս, էկան հ՝ոդա ասին, դարբնի փեսեն սպաներ եմ, բրլե դու զէն մ՝ասի, քու նշանլուն հ՝ո՞ւր է, հանդեր հ՝ոդա հ՝ընկուկ վըր քիթուբերնին, օր ես քնա։

Տղեն ասեց.—Ես էկեր իմ, ախչիկ չըմ տեսեր ի։

— Չէ՛ղնի գացեր է քու հ՝ետևե՞ն,—կասե դարբին։ Կիդի զշուն հարձրկե։

Շուն կհարձրկե։ Դարբին կասե.—Մընե*, ախչիկն հ՝ո՞ւր է, քինե կուզիմ։

Շուն կվազնե, դարբին ու տղեն լէ՝ շան հ՝ետևեն։

Ախչիկն է, օր տնեն կելնի դեմ կէրթա կելնի զընարիմ գլուխ,

---

* Շան անունն է (Ս. Բ.)։

էդ զընարի տրկեն լէ շուրրմ կընցնի, օր թալե զինք էդ՝ տեխեն, հ՚ընկնի մեռնի։

Շունը կրռնե զախչկա օտներու ըռեճ ու կէրթա, տզից ու դարբնից ձիում մեյդան հ՚առեշ կէրթեր շուն։

Ախչիկն է, հ՚էլավ վըր քարուն, զձեռներ բանցըրցուց վի օր խանդար էներ զինք ու թալեր ցած, հեղըմ էրեց, չթալեց, հեղըմ էրեց, զինք օր էդ էր կթալեր, շուն հ՚ետևանց համփլավ ախչկա օտներ ու չթորկեց։

Ախչիկ լէ, էլ շրի մեշ հ՚ընկնելու տեխ, հ՚ընկավ վըր քարուն, հերն ու տղեն տեսան, վազեցին։ Վազեցին, վալայի տղեն դարբնից հ՚առեշ հասավ, գրկեց զախչիկն, հեր լէ էկավ հասավ, ըստհաղ իրեք հետրաց փաթվան հ՚իրար ու պագեցին զիրար։ Օր զիրար պագեցին խըլըսան, ըստհաղ դարձան վըր շան, իրեք հետրաց գրկեցին շուն ու դարցան էկան տուն, հօրին օր շուն էր ազատեց զախչիկ։ Էկան տուն, դարբին բերեց դրեց զուր գինու փառչ հ՚օրթոլախ, խմեցին ու ուրանց քեֆ էրին, պառկան քնան, հ՚էլան լուսմութ։ Օր հ՚էլան, լուսմութ, դարբին ասեց տղին.—Գնա զքու թաղարուկ տես, առ զքու նշանլուն ու գնա։

Զհարսնեք բռնին։

Յոթն օր, յոթ գիշեր դոլ ու զուռնեն զարկեց, հարսնիքն օր ֆրղավ, բերեց տղին տունըմ լէ շինեց, դրեց զախչիկ ու տղեն մեշ, ասեց՝ «Գացեք ձզիկ ապրեք»։

Տղեն օր կարգվավ խըլըսավ, ձիմ՚ լէ առավ ուրեն, էղավ ավչի ու հ՚ընկավ սարեր։

Ավուրըմ մեկ գնաց սարում՚ գլուխ, տեսավ օր խանում ու խաթուն կնիկըմ էնդիեն կշորորա ու կիգա։

Էկավ օր կմոտեներ ուրեն, հ՚էլավ բռնեց։

Ասեց.—Էդա հ՚իգամ, էդա էրթամ հ՚ուստե՞ն կիգաս, դու ի՞նչ կնիկ իս. զքու գլխու գալիք ընծիկ պիտի պատմիս։

Կնիկն ասեց.—Ջանը՚մ, հ՚իսնե վազ արի, իմ գլխու գալիք շատ է, չըմ կառնա պատմի։

Բռնեց փողպըտեն.—Անպատճա՚ռ, պիտի ասիս։

Կնկա ճար կտրավ, ասեց.—Նստի՚ ասիմ։

Նստավ, կնիկ լէ նստավ կուշտ։

Ասեց.—Ջիս կտեսնա՞ս, ես գրռ շահել նոր հարս կնիկըմ իմ, հմալ չէ՞։

Տղեն ասեց.—Հա՚։

— Ես յոթն ախպեր ունենք, ես լէ ուրանց քուր. ավուրըմ մեկ, մութն էր, հ'իրկունըմ մեկ յոթն ախպեր փարիշան էղեր ենք, նըստուկ ենք մըր տուն։ Տեսնամ մեկ քիպար մարդըմ մտավ դռնեն ներս։

— Բարև։

— Աստծու բարին։

Նստավ բեն մը։

Ասեց.—Դուք չըք հարցո՞ւ, դու ի՞նչ մարդ իս։ Հ'ուստե՞ն կիգաս, հ'ո՞ւր կէրթաս։

Իմ ախպրտանք ասին. «Ի՞նչ ասինք, ասենք մսաֆըր մարդ է, էկեր է, կընցնի կէրթա»։

— Ի՞նչ իս էկե,—իմ ախպրտանք ասին էդ խըսից վերշ։

Մարդն վերուց ասեց.—Էկեր իմ զձըր քուր աստծու հրամանով կուզիմ ընծիկ, կիտա՞ք։

Իմ ախպրտանք իշքին զէգ մարդու շըքիլ ու բարաիկիդութենն, ասին.—Կիտանք։

Դարձան էդ մարդուց հարցուցին, ասին.—Ախպեր, կիտանք, բան չրնք ասի, քզիկ տուն տեխ, բան կա՞ քզիկ։

Մարդն ասեց.—Ախպրտանք, դուք զախչիկ ընծիկ է կիտաք, տան ու տեխի՞ն է կիտաք։

Իմ ախպրտանք ձեն չհանին, ասին.—Օղորդ կասե.—ախչիկմ՞ է՝ մենք լէ կիտանք, կուզե թըղ տանե թալե ծով։

Շարբաթ խմեցին, հ'էլավ կէրթեր։

Ասեց.—Տվեք իմ նշանլուն, կառնիմ կէրթամ։

Իմ ախպրտանք ասին.—Ջանը՛մ, հո՞ր է ախչիկ, հո՛ր է տղա, չէղնի, մինք լէ մարդ ինք, շարաթըմ էրկու թըղ մնա, մըր քուրոշ օտք ու ձեռք տեսնանք, էկո ու գնա։

— Չէ,—ասեց մարդն,—ես էդա գախ կտանիմ։

Խոսքըմ էդորնէ, մեկ իմ ախպրտոց մոտեն, իմ ախպրտանք զձեն ուրանց կտրին։

Ասին.—Ուր մալն է, կտանե՝ թըղ տանե, խոմ էդ մարդ չտանե ուտե. տարավ, կերավ լէ՝ թըղ ուտե, ախչիկ է կհրսեպինք թե չէղավ։

Բռնեց զիմ ձեռք, բարեմնաց էղավ իմ ախպրտոց մոտեն ու հ'էլանք հ'ընկանք ճամբախ, էկանք։

Առավ զիս, էկավ էնա մեծ սարու գլուխ, մըղարեմ կեր, մտուց զիս մըղարի մեշ, թե չրս ավտընա լէ, քելե էրթանք ցուցում քը-

զիկ։ Նստանք էդ մղարի մեջ, բան չկա մղարի մեջ, ծել քար, մի-նակ դուռըմ կեր արևպտոց դին ու մայմուն մը լէ կապուկ էր մեկ քեռշեն։

Նախա, նստանք, գնաց հաց լէ առավ էկավ, քիչըմ կերանք, էղավ պառկելու գահ, հ'էլավ տեխըմ ուրեն թալեց, տեխըմ լէ ընծիկ, ինք պառկավ հ'ոնա, ես լէ՝ հ'ոնա։

Լուսմութ օր էղավ, հ'էլավ բերեց զչայ ու խահվեն դրեց իմ խեչ, քիչըմ լէ՝ հաց։

Ասեց.—Էդա քղիկ։

Հ'արցրկեց զմայմուն, թողեց մղարի մեջ, զընարըմ ջրջեց մղարի դռան դեմ ու թորկեց գնաց։

Էդ մայմուն հ'էլավ էկավ իմ բոլոր, ինչ կէնիմ, իլաճ չէղնի զփանճ թալեց իմ հալվներ էրեց գրզան-գրզան։ Մեկ լէ տեսնամ զձեռք զարկեց մեջքս ու վերուց զիս դրեց գետին, հ'էլավ հեծավ վրես։

Ինչ գլխու ցավանք էնիմ, աղեկըմ չինեց զիս, թորկեց դնաց ուր տեխ նստավ, ես լէ մանցի իմ տեխ նստուկ։

Ասի.—Կանի հ'իրկուն օր էկավ էդի (էրիկ), կասիմ զէդա մայմուն կփեցու։

Հ'իրկուն էղավ, մեկ լէ տեսնամ դրոթ ու դրոթ, դրոհոլ-դրոհոլ փրթավ էնդիեն էկավ, շրջեց զմրղարի ղռան զընարն ու էկավ ներս։

Էկավ, ասի.—Տեսա՞ր քու թերմաջ մայմուն ինչ էրեց իմ գլուխ, դու օր հարձրկեցիր, թողիր մրղարի մեջ ու գացիր, էդ թերմաջ հ'էլավ էկավ իմ բոլոր, ինչ էրեց, ես ձեռք չտվի, թալեց զփանճեք զիմ հալվներ, զիմ թումբան էրեց գզան-գզան, վերցուց զիս դրեց գետին, հ'էլավ հեծավ վրես ու զուր գործն տեսավ։

Կյուլդան աղրր լէ չասեց մայմունին, բռնեց կապեց, քիչըմ հավ ու ձագ էր բերե հետ, թալեց էնտեխ։

Ասեց.—Լուսուն մզիկ կերակուր կեփես։

Օլոր օր, էմ լէ հ'էլավ լուսուն, հարձրկեց զէդ թերմաջ, թորկեց մրղարի մեջ, զարկեց զզընար դռան դեմ, թորկեց գնաց։ Ինք օր գնաց, մայմուն թրռվրռտկալով էկավ իմ՝դին, գրկեց դրեց գետին, զիս սոսրթեց, թողեց գնաց ուր տեխ նստավ։ Հ'իրկուն էկավ, քիչըմ՝ ճնճուղ-մրնճուղ էր բերի ուր հետ, ասի, ձեն չհանեց։ Ինչ գլխու ցավանք էնիմ, իրեք օր լէ հարձրկեց թողեց մեջ մրղարին, իրեք օր լէ զէդ բան էրեց իմ հետ, նոր բռնեց կապեց։

Ինն ամիս, ինն օր, ին սահաթ պաքլամիշ էրի, պառկա ես, տղեմ էղավ։ Էղավ էրեխեն, ես ցավ կանուկ ենք, դայեկ լէ չբերեց, առանց դայեկի էղավ։ Նախսա, ես իմ ցավու մեշն իմ էղի, էրեխեն օր կէղնի, կբերե խոնտախ կշինե, փաթե, դնե իմ խեչ։ Էրեխեն դրեց իմ խեչ։

Ասեց.—Քիչըմ փլավ էփիմ չուտի՞ս։

Ասի.—Հ'որի՞ն չըմ ուտի, դարտկվուկ իմ, կուտիմ։

Մեկ լէ տեսնամ՝ հ'էլավ, էրկու խուշխանա բերեց դրեց վըր օջիին ու ղօջախ կպուց. օր ղօջախ կպուց, խըլըսավ, ես յորղնի տկեն ծըրպեր իմ կիշքիմ, տեսա օր էկավ ղէրեխեն առավ իմ կըշ-տեն տարավ, բռնեց բոկեն թըմբցուց, էրեց կտոր-կտոր ու լըցեց խուշխնի մեջ, դրեց վըր կրակին։

Բըլե էրկուքեն ո՞ր մեկ խուշխընի մեշն է կէփե, չըմ դինա։ Հեղըմ լէ իշքիմ, տղի օսկրներ էփան, էկավ հանեց դուրս ու ղփլա-վի բլղուր թալեց վրեն։ Կհասկնա՞ս Ջալալի բաշի. դարբնի տղի անուն Ջալալի բաշի էր։

Ջալալի բաշին ասեց.—Հ'ո՞րի չըմ հասկնա։

Քիչըմ լէ մանցի, տեսնամ օր էկավ, վերցուց զիմ յորղնի փեշ։

Ասեց.—Ախչի՛, զարթուն ի՞ս, փլավ էփավ, չը՞ս ուտի։

Ասի.—Զարթուն իմ, կուտիմ։

Գնաց, լըցեց էրկու լանգառի լիք փլավ ու առավ էկավ, մեկն դրեց ուր հ'առեշ, մեկ լէ իմ հ'առեջ։ Օր բերեց, դրեց իմ հ'առեշ։

Ասի.—Մա՛րդ, հ'էլի քիչըմ ջուր բի խմիմ ու ուտիմ զիմ հաց։

Էն օր հ'էլավ գնաց ջուր կբերեր, ես հիշտալով վերցի զիմ հ'առջևու լանկառին, դրի էնդոր հ'առեջ, զէնդոր հ'առջևուն՝ իմ հ'առեջ։

Էկավ ջուր բերեց, տվեց խմեցի ու նստանք կերանք։ Ես կերա զիմ հ'առշևու փլավ, էնի լէ զուր հ'առջևուն։

Կերանք խըլըսանք, վերցուց ղամներ, տարավ դրեց ուր տեխ, էկավ օր նստեր։

Մեկ լէ տեսնամ՝ բրնձի հատեր բերնեն փրթան ու կիգան ցած, հ'ուր օր կթոնի քիսնի, կծակե կընցնի, վախենելուս ես հ'էլա զյորղան քաշի իմ գլուխ ու կուճուրա, մեկ էրկու հատ ախըր առան իմ ձեռք ծական, չըս ավտընա, էդ ա լէ իմ ձեռներ։ Գեժդանգեժ, մեկ լէ տեսնամ, էդ մարդ վառավ էղավ փոշի։

Մայմուն կապուկ է էն տեխ, դուռ փակուկ, չըմ կառնա հ'էլնի դուրս, իմա՞լ էնիմ, իմա՞լ չէնիմ։

Հ'էլնիմ զէդ փոշին խառնիմ, տեսնամ գունդրմ բալնեք։ Առա զբալնեք, գացի զէդ գուռ բացի, ի՞նչ տեսնամ աղեկ է, ի՞նչ օր կհարցուս, օսկիմ կհարցուս, արծաթ մի, աղրութ-զմրութ մի, ինչ։

Ասի «էդա հրմլա չէղնի, ես զվոր տանիմ, զվոր թողիմ, կանի էլնիմ էրթամ, իմ ախպրտոնց խարար իտամ, հ'իգամ առնին էրթան»։ Հ'էլա մըղարի դռան ճանկոտեցի-մանկոտեցի, վալա՜յի, ծակըմ բացվավ, գացի էդ ծկով, քարու տկով զիս թալի դուրս։

Հ'ելա դուրս, էկա իմ ախպրտոց խեչ։

Ասի.—Ախպրտանք, հ'էլեք, հ'էլեք էրթանք, օր զէդ հարստութեն ժողվինք ու առնիք հ'իգաք. զիմ գլխու դալած պատմած էի ուրանց։

Հ'էլան, ջորիմ' էրկու ուրանց կեր, մեկ էրկուս լէ դրկիցներուց առան ու էկանք։ Էկան մըղարի դուռ, հա դեմասու պես, յոթ լէ զմեջք ուրանց զարկին քար, ջրջեցին մեկդին։

Գացինք ներս, բառցանք զջորեստանք, առանք էկանք։

Էդա յոթ տարի է կուտին, չուտին՝ չխըլըսի, քանի էրթա կէվելնա։

Ամեկ մեկ ախպեր էղեր է վազիրըմ, զջորին կհարցուս, զձին կհարցուս, զգոմեշ կհարցուս, զօսկին ու արծաթ կհարցուս, հըսապ չկա։ Եա լէ էդա հ'էրկրի խաթուն իմ, իմալ, էղավ, հ'ընցած գիշեր էրազ տեսա՝ ես հանդ ենք էդ մղարի մեջ։

Ասի.—Ես պիտի էլնիմ էրթամ, էդ մղարի քյավշեն։

Իմա՞լ հ'էլնիմ էրթամ, իմա՞լ չէրթամ։ Ձիով էրթամ, իմ ախպըրտանք պիտի ասեն, տես մըր քուր ֆըլան ֆելի հ'ետև կօլըրդի։ Օտքով էրթամ, տես օր ջրրտ հ'իգա ընծիկ հ'ըռաստ, սպանե։

Վալայի ասի, թող իմ ախպրտանք ղուրանց սիրտ իմ վրեն չավրին, թող ջրրտ թալե, օտքով կէլնիմ կէրթամ։

Հ'էլա օտքով գացի, օլըրդա մըղարի մեջ, զէդա կուկու անթափել օսկին գտա, առա էկա ու կապիկըմ լէ կեր էն տեխ, հարձրկի թողի, գնաց ուր ճամբու հետ, դարցա էկա։

Հըմկա քու հ'առեջ կանուկ իմ, կուղիս սպանե, կուզիս առ զէդա օսկին, թող գնա քու ճամբու հետ, կուզիս առ զիս, զվորն օր կուզիս, զէն էրե։ Ջրս ավտրնա լէ իմ ասածներուն, գնա մղարեն էնա տեխն է, ես կկանիմ հ'ոտա, իշքե ու արի։

Հեծա զիմ ձին, գացի, ի՞նչ տեսնամ, զէրու չափ մըղարեմ, մարդ մտնի ներս՝ կզարդնդա, օլըրդա, դարձա էկա, հ'իշա ձիուց ու պագեցի զէդ կնկա ճակատ։

Ասի.—Նշանըմ տուր ընծիկ։

Ասեց.—Էդա քզիկ նշանըմ։

Հանեց օսկի թասըմ ծոցուց, վրեն լէ ուր անուն էր գրուկ՝ Նիկար խանում, տվեց ընծիկ։

Ասեց.—Էդ իմ նշան։

Իմ մոտ լէ անգին քարըմ կեր, հանի տվի կնկան, բարեմնաց էղանք հ'իրարուց, էն թողեց գնաց ուր ճամբու հետ, ես լէ դարցա էդա իմ տուն, բըլե էն վախտ օր կէրթեր, հարցուց հ'իսնե.—Քու տուն հ'ո՞ւր է։

Ասի.—Ֆըլան տեխն է։

Ես լէ հարցուցի.—Ձըր տուն հ'ո՞ւր է, գուք հ'ո՞ւր կմնաք։

Ասեց.—Ֆըլան տեխ,—նոր թողինք էկանք։

Դարձա էկա, հ'իրկուն նստուկ ենք ես ու իմ կնիկ, իմալ էղավ, իմ կնիկ հարցուց, ասեց.—Մարդ, հ'էսօր հ'ո՞ւր իս գացի, հ'ուր իս էկի։ Իմալ օր էղեր էր պատմի իմ կնկան։

Ախչիկ լէ կէրթա, ուր ախպրտոց չիշխնա պատմե իմալ կէղնի, տղի տված ակի վրեն աղեկ չիշքե, գիշեր օր կէղնի, կհանե։

Կասե.—Կանի տեսնամ էդ ի՞նչ քար էր էդ տղեն տվեց ընծիկ։

Ձքարն օր կհանի դուրս, կտեսնա ի՞նչ օր ցերեկվան գախ լուսըմ զարկեց տան մեշ, քարուց ձենըմ կէլնի օր աստված ինք նշանց չի տա, վիռա բանձր ձենով կբոռա, կանչե. «Անգին օր կա՝ ես իմ, գոհար օր կա՝ ես իմ»։

Էդ ձէնի ու էդ լուսու վրեն ախպրտանք կ'հեշրնան, կէլնին։

Ասին.—Քուրիկ, էդ ի՞նչ է։

Ախպրտանք օր հ'էլան, ախչիկն շուտըմ զքար ծրարեց։

— Ախչի, էդ ի՞նչ է. անչարա է պիտի ասիս։

Ձոր դրին վրեն, ճար կտրավ, ասեց.—Ալ ու քեֆյաթ հըմլա է, էս օր գացի ֆըլան տեխ էկա, տղեմ՝ հ'ըռաստ էկավ։

Ասեց.—Նշանըմ տուր ընծիկ։

Ես լէ հանի գիմ ծոցու թաս, տվի։

Ասի.—Նշանըմ լէ դու տուր ընծիկ։

Քարըմ լէ էնի հանեց տվեց, էն վախտ վրեն չիշքի, միտքս հ'ընկավ, հըմկա հանի իշքի վրեն, տեսա օր ինչ օր ցերեկվան լուս կիտա տան մեշ ու կկանչե՝ «Ես իմ անգին քար, ես իմ գոհար ակ»։ Դուք օր զարթաք, վախեցա, վերցի պահի։

Ախպրտանք հարցուցին, ասին.—Ախչի՞, դու դինա՞ս էդ տղեն հ'ուր կմնա։

Ասեց.—Հա, ֆըլան տեխ։

Առան զտղի տան սալըխեն ուրանց քուրոջ մոտեն ու հ'էլան յոթ ախպեր հիտրաց հ'ընկան ճամբախ, էկան։ Էկան, հարցնելով, փորձելով զտղի տուն գտան։ Ջարկին զդուռ, տեսան օր կնիկըմ հ'էլավ դուրս։ Ախպըրտանք ասին.—«Ես իմ անգին քար, ես իմ գոհար ակն» հո՞դ է, հարցուցին։

Կնիկն ասեց.—Հա՛։

Էկավ ներս, ասեց.—Մարդ, յոթ մարդ էկեր ին կանի մըր դուռ, կհարցուն. «Ես իմ անգին քար, ես իմ գոհար ակն» հո՞դ է։

Տղեն հ'էլավ դուրս, տեսավ։

Ասեց.—Ախպրտանք, ներս արեք, հ'որի՞ն իք կանի գուռ։

Ախպրտանք հ'էլան վերին դին։

Տղեն ասեց կնկան.—Կնիկ, ախպրտանք ճամբուց կիգան, հըմկա անոթի ին, քիչըմ հացի թադարուկ էրե։

Կնիկ զարկեց ու զարկվավ։ Քիչըմ ձվաձեղ, փլավ, հավ էփեց, բերեց դրեց մսաֆըրներու հ'առեջ։ Հաց կերան, խըլըսան։

Տղեն հարցուց, ասեց.—Ախպրտանք, ամոթ չէղնի, դուք հ'ուադե՞ն գիկաք, ի՞նչ մարդ եք, իմա՞լ խավմավ էկաք հ'ոդա։

Յոթն ախպեր հ'իտրաց վերցին, ասին.—Մենք դըրուստ էկեր ինք քու խեչ, զօղորդն ասե՝ էդա քար դու ի՞ս տվի մըր քուրոջ, իմա՞լ էղեր է օր տվեր իս։

Տղեն տեսավ ուր տված քարն է, ասեց.—Հ'ո՞րի զօղորդ պիտի չասիմ։ Օրըմ ես ավճութենից գիկենք, ·իշքեցի տեսա օր կնիկըմ էնդիեն գիկեր, օսկով ու արծաթով, զուքս ու զինաթով։ Միտք էրի օր զէդ կնիկ սպանեք։

Ասի՝ «Կա ու չկա, էդա կնիկ գեջ կնիկ, մա՞րդ է սպանի, փախի էկի, շնութեն է էրի մարդու հետ, փախեր է». վերցի զթուր օր զարկենք։

Կնիկն ասեց.—Մը՛ զարկի. զիմ գլխու գալածն պատմիմ, սորա սպանե։

Ասեց.—Ես յոթ ախպոր տեր իմ, ամեն մեկ մե աղայ ին, ես լէ՝ խաթուն։ Օրըմ հ'էրդիս մեջ տեսա, ես ֆըլան մըղարի մեջ ենք, հ'էլա գացի, յուխլամա էնեք, տեսնեք, բան չկեր մեջ։ Գացի յուխլամա էրի, զէդա անթափիլ օսկին գտա, կուզիս զէդ օսկին առ քզիկ, թող զիս էրթամ, կուզիս սպանե, կուզիս զիս առ տար քզիկ, չըս ավտընա, զնա զմըղարեն իշքե ու արի հանդե հ'ոնա։

Զկնիկ թողի հ՝ոդի, ես հեծա գացի, տեսա օր կնկա խոսքն օղորդ է, էկա հ՝իշա ձիուց, պագեցի զճակատ։

Ինք հանեց զուր ծոցու թաս տվեց ընծիկ նշան, ես լէ զէդ քար տվի ուրին նշան. էն թողեց գնաց ուր ճամփու հետ, ես լէ թողի էկա իմ տուն։

— Շա՜տ աղեկ,—ասին ախպրտանք,—մադամ օր զէդ քար դու իս տվի, քու հալ ու հալբաթն, իդարեն իմա՝լ է։

— Փառք աստծու, կտեսնաք ես իմ, իմ կնիկ ու իմ ձին, քիչըմ լէ հող ունիմ, կվերցում դնիմ, կապրիմ, զտասն աղեկ չապրիմ, զէրկուսն աղեկ կապրիմ։

— Օր հըմալ է,—ասին,—ախպեր, մենք յոթն ախպեր ինք, մեկ լէ դու՝ ութ ախպեր, հ՝էլի էրթանք, քզիկ տուն լէ իտանք, տեխ լէ, ձի լէ, ափսոս չի՞ս դու մնաս հ՝ոդա, մենք կէղնիք քզիկ պզտիկ, դու մզիկ՝ մեծ։

Վերցին ղդարբնի փեսեն ու առան էկան ուրանց մոտ։

Շինեցին քոշք ու սարեմ՝, ասին.—Դը՛ գնա քզիկ ապրի, քանի սաղ իս, կի ու խմի։